

բերաբար տրամայալում՝ էթ Մակեդոնիայում ժողովրդի ամենատագնապալի կացութեան միջնցին:

## ԱՅԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Աւստրիայում, որտեղ կաթոլիկների ամուսնալուծութիւնն օրէնքով արգելուած է, պահանջ է յայտնուում, որ իրարից անշատուած ամուսններին իրաւունք տրուի նորէն ամուսնաւու։ Նոյն իսկ անջատուած կաթոլիկ ամուսնների ընկերակցութիւն է կազմուել, որը սեփական թերթ է հրատարակում։ Այդ ընկերակցութեան պատգամաւորները՝ իրենց գլուխ ունենալով Բիտերին՝ ինչպէս հազորդում է «Katholische Kirchenzeitung» դիմել է դլխաւոր նախարարին վերաքննել քաղաքական օրէնքսղբութիւնը և վերացնելու Ա-դ յօդուածը, որով արգելուած է անջատուած ամուսնների սլուկը, և աւելացըց, որ ինքն արտայայտող է Աւստրիայում տպրող 200,000 քաֆանուած ամուսնների ցանկութեան։ Կերպերը մատնանիշ եղաւ այդ բանի դժուարութեան վրայ, բայց խոստացու անել ինչ որ կարելի է։ Դիմումներ են եղած և օրէնքներ վերաքննող մասնաժողովին։ Ընկերակցութիւնը նպատակ ունի որոշ շարժումն առաջ բերելու և Աւստրիայի զանազան քաղաքներում բաժանմունքներ բանալու։ Կաթոլիկական մամուլը առանձին նշանակութիւն չի տալիս այդ շարժումներին, և այդ բանում տեսնում է մասօնների մատը բայց եթէ այդ ընկերութիւնը բարգաւաճի, նա ոպառնում է Հռովմին հաւատացողների ահազին թուի անջատումն։ Ընկերակցութեան ժողովին նախադահ Բիտերը յայտնեց, որ եթէ իրենց չեն ազատիլ ներկայ վիճակից ապա ուրեմն իրենք ստիպուած կլինին ազատել իրենց Հռովմից։

Պիոս X պապի ճառը կարգինալիներին։

Եթք Կոմիրը կարծիք յայտնեց եկեղեցին պետութիւնից բաժանելու մասին, գլխաւորապէս շեշտեց այն հանդամանքի վրայ, որ Պապն ու եպիսկոպոսները սիստեմատիքարար միշտ խախտել են կոնկորդատը (եկեղեցու և Քրանտիայի մէջ եղած պայմանագիրը)։ Այդ մեղաղբանքը պապի կողմից անպատճախան ըսմնաց Գաղանի կանսիստորիայում Պիոս X պապը նոյեմբերի 14-ին նախ քան հերթական գործերին անցնելը, կարեոր դատեց կարգինալ ներին դիմել առանձին ճառով և կանդ առաւ քրանսիական

դործերի վրայ, և աշխատեց հերքել սարդած մեղադրանքը։ Մատնանիշ լինելով կոմիտեդատով երկու կողմերի ընդունած պարտաւորութիւնների վրայ, պապը ապացուցանում էր, որ ոչ թէ եկեղեցին, որ միշտ պահպանել է պայմանները, այլ Գրանտիական կառավարութիւնն է խախտում պայմանագիրը։

Կոնկորդատը կաթոլիկ եկեղեցուն վերապահում է դաւանութեան ազատութիւն, մինչդեռ Ֆրանսիայում Եպիսկոպոսներին արգելում են առանց կառավարութեան զիտութեան յարաբերութիւն ունենալ պապի հետ՝ այցելել կամ նամակ գրել նրան, որը բարձրագոյն ուսուցիչ և պահպան է կաթոլիկ անուան։ Յայտնի կերպով անարգում են (ատում) կաթոլիկ միաբանութիւնների գործունէութիւնը, որոնք պապի անունով և հեղինակութեամբ կառավարում են տիեզերական եկեղեցին։ Վանական միաբանութիւններն՝ իրենց հայրերի կրօնը պաշտպանելու համար աքսորուած են, և գեռ նորերս հող ևոր դպրանոցից հեռացրած են Սուլպիցեան միաբանութեան կառավարիչ անդամները, կառավարութիւնը թոյլ չի տալիս, որ ըստ կանոնական ձնի ընտրուած եկեղեկոպոսական թեկնածուները պաշտօն ստանան, և այդ քաշքշում են մինչ այն, որ պապից մերժուած թեկնածուներն են հաստատուած։

Հակառակ կանկորդատի առանց քննութեան, դատաստանի և պաշտպանութեան, կտրճում է եպիսկոպոսների և այլ պաշտօննեանների ռոճիկները։ Զի կարելի յուսաւ, որ թշնամութեանը գէթ ապագայում վերջ կը դրուի։ Մօտեցքս պատահած մի քանի փաստերը ցոյց են տալիք, որ կառավարութիւնն այնչափ է դրգուած եկեղեցու դէմ, որ կարելի է երկիւզ կը ել, թէ մօտ ապագայում կը գիմի ծայրայեղ միջոցների, որով հետեւ հակառակ ու աթոռի յայտարարութեանց, հասարակապետութեան կառավարութիւնը կարծում է, որ քրիստոնէական կը օնի հետ ոչ մի յարաքերութիւն սկսել չի կարող—որով կը եւսկական քարուրանք է քարդում քրանսիացների վրայ՝ որպէս կաթոլիկների և քաղաքացիների վրայ։ Բացց ինչ էլ որ պատահնելու մինի, մեզ անպատճառատ չեն գտնիլ, յանկարծակի չեն սարսափեցնիլ, որովհետեւ մեզ ամբացնում է Յիսուսի ձայնն ու յուրգորը։

«Եթէ զիս հալածեցին և զձեզ հալածեցին (Յովհ. 15 գ. - 20) Յաշխարհի աստ զնեզութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի»։ (Յով., 16—33)։ Եթզում պապը յուղոր կարդաց կարգինալներին շերմադին աղօթել առ Առառուած, որ մութացնի խաղաղութիւն և անդորրութիւն պարգևի իւր եկեղեցուն։

Պիսո Հ պապի երկու նախորդների օրով, կաթոլիկներին համալիւայտմ արգելուած էր քաղաքական ընտրութիւններին որևէ է մասնակցութիւն ունենալ: Ենորհիւ այն բանի, որ վերջերս հանգամանքները շուրջ փոխուեցին, կաթոլիկներին Պիսո Հ պապը թոյլատրեց մասնակցել ընտրութիւններին, բայց հրահանգեց, որ կաթոլիկ եկեղեցուն հակառակ մարդկանց չընտրեն: Այդ թոյլատրութիւնը տեղի ունեցաւ սօցիալիստների և հասարակապետականների գէմ աւելի ուժեղ կերպով մաքառելու և այդ արդիւնքն էլ տուաւ, որովհետև պահպանողականներն ուժեղացան կաթոլիկներից ընտրուած երկու պատգամաւորների ձայներով:

Յիշեալ թոյլատրութիւնը լաւ տպաւորութիւն թողեց ըուլոր կաթոլիկների վրայ և ընդունուեց որպէս գրաւական եկեղեցու և իտալական թագաւորութեան մօտալուտ հաշտութեան:

### Ա. Եղիշական (Եպիսկոպոսական) Եկեղեցի

Ամերիկայի Բոստօն քաղաքում անցեալ հոկտեմբերի 5 ից մինչև 25 ը գումարուած էր Ամերիկայի Միացեալ Նահանգների եպիսկոպոսական եկեղեցւոյ դլխաւոր համաժողովը, որին ներկայ էին եպիսկոպոսներ, ստորին հոգեոր պաշտօնեաներ և քաղաքացիք, որոնք ժողովւած են երեք տարին մի անգամ: Օտար երրացի փոքրաթիւ հիւրերի թւում ներկայ էր Անգլիական եկեղեցւոյ գլուխ Քենտրոների արքեպիսկոպոսը: Քննութեան նիւթ եղած Խնդիրներից ամենից շատ ժամանակ և ուշագրութիւն գրաւեց իւր վերայ ամուսնութեան և ամուսնալութեան խնդիրը: Զանազան դաւանական գաւանութեան ներկայացուցիչներից ընտրած մասնաժողովը քննում էր այս տարի այն ընդհանուր չարեաց գէմ մաքառելու միջոցները, որոնք սպառնում են քայլացել ընտանիքը, և գնուեց գեմել ժողովրդին առանձին շրջաբերականով՝ շեշտելով ամուսնութեան որբութիւնը, և նրան թեթև վերաբերուելու կործանիչ հետեւանքները: Որպէս ամենաազական միջոցի, այդ բանի գէմ մատնանիշ եղան, որ պէտք է խստացնել եկեղեցւոյ վերաբերմունքը գէպի ամուսնալութեական խնդիրներն և բաժանուած ամուսնուները: Արովհետեւ ներկայ եկեղեցական օրէնքը բաժանուած ամուսնուներից անմեղ կողմին իրաւունք է տալիս նորէն ամուսնանալու, ուստի ժողովում փոքրեցին վերացնել այդ բացառիկ օրէնքը և խոտիւ հետեւ, որ